

ՔՆՆԱԴԱՑՈՒԹԻՒՆ ԵԽ ՄՇՏԵՆՑԽՍՑՈՒԹԻՒՆ

Վ. Լուսկենիչ՝ «Կատալիկցիրը», պատկերազարդ, թարգմ. Յ. ք. Սառիկեանի,
1905, Թիֆլիզ, 15 հ.:

Պ. Վ. Լուսկենիչը յայտնի է իրքև բնական գիտութիւնները լաւ ժողովրդականացնող գրող և դասախոս։ Նրա գրչի տակից գուրս են եկել բազմաթիւ բրոշիւրներ, որոնց ամբողջութիւնը ընդգրկում է տիեզերքի բոլոր երևոյթները։ Յ. ք. Սառիկեանը արդէն թարգմանել էր «Բնական երկու մեծ թագաւորութիւնները», այժմ՝ տալիս է «Կատալիկները» և մտադիր է թարգմանել պլ. Լուսկենիչի և միւս աշխատութիւնները։ Այժմ, երբ վերաբացւում են մեր գպլոցները, հայ մանուկների համար մտաւոր շատ լաւ մնունդ են ներկայացնում յիշած հեղինակի բոլոր ժողովրդականացրած գրքոյները։

Թարգմանական լեզուն վատ չէ։

Գ Լեւոնեան՝ «Գծագրութեան եւ նկարչութեան տարրական դասընթաց», առաջին մաս, 1905, Թիֆլիզ, 20 հ.։

Մեր դպրոցները բաւական զուրկ են լաւ կազմած դասագրքերից։ այդ կողմից առատութիւն է միմիայն կրօնական դասագրքերի մէջ, որոնց մեծագոյն մասը մի աւելորդ բեռն է և լոկ շահադիտական գործ... Պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել միւս առարկաների դասագրքերը կազմելու վրայ։ Վերև առաջ բերած դասագիրքը կարող է համարուել՝ աջող ձեռնարկ «Գծագրութեան և նկարչութեան»։

Դոկտոր Կ. Փաւայեան, «Ընդլարձակ դպրոցական առողջապահութիւն»,
1905, Ալէքսանդրիա, 2 ր., բաժանորդագրութեամբ։

Այս օգտակար և մեր կրթական գործի համար անհրաժեշտ